

ԿԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Դեղերի մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի

Վերլուծության հանդեպ միասնական մոտեցում ապահովելու, նախարարությունների և վերահսկող մարմնի աշխատանքը դյուրին դարձնելու համար միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է ստեղծել և աշխատանքներն իրականացնել ԿԱԳ-ի միասնականացված ձևաթղթով: ԿԱԳ մշակողերը կարող են լրացուցիչ տեղեկատվություն տրամադրել տեխնիկական հավելվածներով:

Ստորև ներկայացված ձևանմուշը պետք է լրացվի ԿԱԳ-ի ձեռնարկի եւ ԿԱԳ-ի հատուկ հարցաշարերի միջոցով, որոնք կազմված են միևնույն վերլուծական քայլերից եւ բաժիններից:

Ձևանմուշը կազմված է հիմնական մասից, որտեղ անհրաժեշտ է արձանագրել առաջարկված տարբերակը, ինչպես նաեւ այլընտրանքային տարբերակների ձևանմուշից (Տարբերակ 2 – ելակետային սցենար և Տարբերակ 3, եթե այդպիսին առկա է):

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՁԱՆՄՈՒՇ

Տեղեկատվություն	
1. Նախաձեռնության վերնագիր	Փոխհատուցվող դեղերի մատչելիության ապահովում
2. Պատասխանատու բաժին(ներ)	ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ
3. Կոնտակտային անձինք (էլ. հասցե, հեռախոս)	Անահիտ Երիցյան Գնել Մայիլյան (+37410) 53 22 57 * 102 (+37410) 53 22 79 * 102 g.mayilyan@regulations.am a.yeritsyan@regulations.am
4. Ամսաթիվ	06.05.2016
Բաժին 1 – Խնդրի սահմանում	
Ո՞րն է խնդիրը. բնույթը/մասշտաբը/առնչությունը	Փոխհատուցվող դեղերի մատչելիության ապահովում Խնդրի դրսևորումներն են. 1. Փոխհատուցվող դեղերի պահանջարկի և առաջարկի անհամապատասխանություն՝ ըստ կառուցվածքի և ծավալի 2. Փոխհատուցվող դեղերի արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցման կարգերի անկատարություն Խնդիրը մեծ է, քանի որ 2015 թ-ին ավելի քան 766,000 անձ ունեցել է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք, սակայն փաստացի անվճար և արտոնյալ պայմաններով դեղ հատկացվել է մոտ 31554 անձի, ինչը նշանակում է, որ անկախ փաստացի դեղի կարիք ունեող շահառուների թվից, ներկայումս պետական միջոցներով բավարարվում են միայն շահառուների 4%-ի պահանջումները:
Որո՞նք են խնդրի պատճառները:	1. Խնդրի պատճառները գնումների պլանավորման գործընթացում 1.1 Անհրաժեշտ դեղերի անվանացանկում ներառված դեղերի նախահաշվային և շուկայական գների ճշգրիտ որոշման մեխանիզմների ու գները կարգավորող մարմնի բացակայություն, 1.2 Առանձին հիվանդությունների բուժման համար նախատեսված սխեմաների,

	<p>դեղերի ընտրության ֆարմակոտնտեսական և տեխնիկական բնութագրերի կազմման չափորաշիջների բացակայություն</p> <p>1.3 Պետության կողմից լրիվ կամ մասնակի փոխհատուցվող դեղերի պահանջարկի և պաշարների վերաբերյալ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատություններում վիճակագրության վարման համար լիազոր մարմնի կողմից սահմանված ձևաչափի և լիազոր մարմնին տվյալ վիճակագրության տրամադրման պահանջի բացակայություն</p> <p>2. Փոխհատուցվող դեղերի գների, դրանց ցանկում ներառված դեղերի ՀՀ-ում գրանցված բոլոր փոխադարձաբար փոխարինելի դեղերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության տրամադրման բացակայություն</p>
<p>Որո՞նք են խնդրի հետևանքները:</p>	<p>1) Դեղերի սահմանափակ ֆիզիկական մատչելիություն</p> <ul style="list-style-type: none"> - անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող անձիք դեղեր չեն ստանում <p>2) Ֆինանսական մատչելիություն</p> <ul style="list-style-type: none"> - պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով դեղերի ձեռքբերման իրավունք ունեցող անձն իր միջոցներով է գնում իրեն անհրաժեշտ դեղերը
<p>Կա՞ն արդյոք պատճառների վերաբերյալ փաստեր (տվյալներ, ցուցանիշներ, վիճակագրություն), որոնք հիմնավորում են Ձեր պնդումները:</p>	<p>ՀՀ ԱՆ-ն վերջին երեք տարվա ընթացքում քաղաքացիների կողմից ստացել է տարեկան միջինում 450 դիմում (դիմում-բողոք), որոնք առնչվում են անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղերի տրամադրման վերաբերյալ պարզաբանումներին (մասնավորապես, թե ինչու լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ տրամադրվել է հենց այդ դեղը և ոչ մեկ այլ դեղ, որը չի հանդիսանում փոխհատուցվող դեղ) և տեղեկատվություններ ներկայացնելուն (<i>Տես՝ Հավելված 1 էջ 20-21</i>)</p>
<p>Կա՞ն արդյոք հետևանքների վերաբերյալ փաստեր (տվյալներ, ցուցանիշներ, վիճակագրություն), որոնք</p>	<p>ՀՀ կառավարության աշխատակազմի “Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն” ԾԻԳ ՊՀ-ի կողմից փետրվար-մարտ ամիսների ընթացքում իրականացված</p>

<p>հիմնավորում են Ձեր պնդումները:</p>	<p>բանավոր հարցումների արդյունքում պարզվել է, որ հարցմանը մասնակցած մինչև 7 տարեկան երեխա ունեցող 30 ծնողներից 27-ը (մոտ 90%-ը) նշել են, որ ընդհանրապես տեղեկացված չեն եղել պետության կողմից մինչև 7 տարեկան երեխաներին անվճար դեղերի տրամադրման մասին և դեղերը ձեռք են բերում սեփական միջոցների հաշվին: Իսկ հարցաթերթիկների միջոցով հարցված ծնողներից 3-ը թողել են մեկնաբանություն այդ մասին հարցաթերթիկում (հարկ է նշել, որ հարցաթերթիկներում փոխհատուցվող դեղերի մասին տեղեկացված լինելու վերաբերյալ հարց ընդգրկված չի եղել): (Տես՝ Հավելված 6 էջ 15-16)</p>
<p>Բաժին 2 – Ելակետային սցենար (առանց գործողությունների տարբերակ/ոչինչ չանել տարբերակ)</p>	
<p>Որո՞նք են գոյություն ունեցող քաղաքականությունը կամ կարգավորումները, որոնք բացասաբար են ազդում խնդրի վրա:</p>	<p>Ներկայումս փոխհատուցվող դեղերի տրամադրման ընթացակարգերը կարգավորվում են ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 27-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 74-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբեր 26-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» թիվ 1717-Ն որոշմամբ, որոնք, սակայն, չեն ապահովում դիտարկվող խնդրի առաջացման պահանջների հաղթահարում և լուծում:</p> <p>Խնդրի լուծմանն է ուղղված եղել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» 2012 թվականի հունվարի 9-ի թիվ 77-Ն և 2012 թվականի օգոստոսի 9-ի թիվ 1055-Ն ՀՀ կառավարության որոշումների շրջանակներում՝ «Բնակչության սահմանված սոցիալական խմբերին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի պարզեցման և բարելավման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը սակայն չի ընդունվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այդ հարաբերությունների կարգավորումը պետք է ընդգրկվեր «Դեղերի մասին» նոր օրենքի նախագծում:</p>
<p>Հնարավո՞ր է, որ խնդիրը բարելավվի/վատանա կամ մնա նույնը (առանց պետական միջամտության): Ինչո՞ւ:</p>	<p>Խնդիրն ավելի է վատնաում: Համապատասխան վիճակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը վերջին հինգ տարվա ընթացքում տարեկան աճել է 5765 անձով կամ 3.1%-ով: Իսկ մինչև 7 տարեկան երեխաների թիվն այդ նույն ժամանակաշրջանում աճել է տարեկան միջինում 2884 երեխայով կամ 1%-ով: Աճ է</p>

	<p>գրանցվել նաև 65 և բարձր տարիքի անձանց թվում՝ տարեկան միջինը 1475 անձով կամ 0.5%-ով, իսկ կենսաթոշակառուների թիվը դիտարկվող ժամանակահատվածում չի ցուցաբերել մշտական աճ, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվազումները աճերի համեմատ եղել են ոչ այնքան ազդեցիկ, մոտավոր հաշվարկներով կարելի է ասել, որ կենսաթոշակառուների թիվը տարեկան միջինում աճել է 4029 կենսաթոշակառուով կամ 0.8%-ով: Այս ցուցանիշները վկայում են այն մասին, որ պետության կողմից երաշխավորված լրիվ կամ մասնակի փոխհատուցվող դեղեր ձեռք բերելու իրավունք տվող երեք ամենախոշոր սոցիալական խմբերին (հաշմանդամներ, մինչև 7 տարեկան երեխաներ և չաշխատող կամ միայնակ չաշխատող կենսաթոշակառուներ) պատկանող անձանց թեմքն ունի աճի միտում, ինչը խոսում է այն մասին, որ դեղերի պետական գնումների իրականացման անհրաժեշտությունն ու ծավալներն ևս պետք է ունենան աճի միտում: Ուստի, առանց լրացուցիչ միջամտության, պետական բյուջեի սահմանափակ միջոցների պայմաններում՝ կխորանա անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղերի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը:</p>
<p>Խնդիրն ի՞նչ հնարավոր ազդեցություններ ունի (օրինակ՝ ֆինանսական, տնտեսական, սոցիալ/առողջապահական, շրջակա միջավայրի):</p>	<p>Խնդիրն ունի ազդեցություն մրցակցության և պետական օժանդակության վրա, սոցիալական և հանրային անվտանգության վրա, ինչպես նաև առողջապահական և հակակոռուպցիոն ազդեցություններ:</p>
<p>Արդյո՞ք անհրաժեշտ է կառավարության միջամտությունը (լրացուցիչ գործողությունները): Ինչո՞ւ:</p>	<p>Այո, քանի որ փոխհատուցվող դեղերի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության խնդրի լուծումն անհնարին է առանց Կառավարության լրացուցիչ միջամտության:</p>
<p>Ելակետային սցենարի հիմքում ընկած ապացույցներ:</p>	<p>Տես՝ Բաժին 1-ի 4-րդ տողը՝ պատճառների վերաբերյալ փաստեր, և 5-րդ տողը՝ հետևանքների վերաբերյալ փաստեր:</p>
<p>Բաժին 3 – Նպատակներ</p>	
<p>Նշեք այն նպատակները, որոնց հասնելուն ուղղված է նախաձեռնությունը՝ չափելի ցուցիչներով և հստակ վերջնաժամկետներով</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Տնային տնտեսություններին հասնող լայնաշերտ հաղորդումների թափանցելիության մակարդակի բարձրացում ▪ Սպառողական բավարարվածության մակարդակի բարելավում ▪ Լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ տրամադրվող դեղերի ծավալի աճ 87%-ով ▪ Փոխհատուցվող դեղեր ստացող անձանց թվաքանակի աճ 87%-ով ▪ Աջակություն ստացած ծերերի/կենսաթոշակառուների թիվի աճ ▪ Որոշակի սոցիալական խմբերի պատկանող և որոշակի հիվանդություններ ունցող անձանց համար դեղերի ֆիզիկական և ֆինանսական մատչելիության բարձրացում

	87%-ով <ul style="list-style-type: none"> ▪ Մահացության / հիվանդացության նվազեցում ▪ Կյանքի տևողության երկարացում
- Ընդհանուր	Բնակչությանը դեղերով ապահովելու և դեղագործությունը զարգացնելու պետական քաղաքականության ապահովում
- Հատուկ	1) հիմնական դեղերի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովում 2) դեղերի տեղական արտադրության խթանում 3) դեղերով ապահովման պետական ամենամյա նպատակային ծրագրերում սոցիալական արդարության ապահովում
- Գործառնական	Փոխհատուցվող դեղերի պահանջարկի և առաջարկի կառուցվածքային և ծավալային անհամապատասխանության հաղթահարում հետևյալ միջոցառումների իրականացմամբ՝ <ul style="list-style-type: none"> • հիվանդությունների բուժման համար նախատեսված սխեմաների, դեղերի ընտրության ֆարմակոտնտեսական և տեխնիկական բնութագրերի կազմման չափորաշիջների սահմանում • փոխհատուցվող դեղերի պահանջարկի և պաշարների վերաբերյալ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատություններում վիճակագրության վարման համար լիազոր մարմնի կողմից ձևաչափի սահմանում և այդ վիճակագրության տրամադրում լիազոր մարմնին • փոխհատուցվող դեղերի փոխարինողների (ջեներիկերի) առկայության դեպքում լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ միայն փոխհատուցվող դեղերի փոխարինողների տրամադրում

Բաժին 4 – Կարգավորիչ/ոչ կարգավորիչ տարբերակներ

Համառոտ ներկայացրեք Ձեր կողմից առաջարկվող տարբերակը և դրա պատճառները:

1. Հիվանդությունների բուժման համար նախատեսված սխեմաների, դեղերի ընտրության ֆարմակոտնտեսական և տեխնիկական բնութագրերի կազմման չափորաշիջների սահմանում
2. Փոխհատուցվող դեղերի պահանջարկի և պաշարների վերաբերյալ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատություններում վիճակագրության վարման համար լիազոր մարմնի կողմից ձևաչափի սահմանում և այդ վիճակագրության տրամադրում լիազոր մարմնին
3. Փոխհատուցվող դեղերի փոխարինողների (ջեներիկերի) առկայության դեպքում անվճար և արտոնյալ պայմաններով միայն փոխհատուցվող դեղերի փոխարինողների տրամադրում

4. Լիազոր մարմինի կողմից իր պաշտոնական ինտերնետային կայքում փոխհատուցվող դեղերի և դրանց գների, փոխհատուցվող դեղերի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված բոլոր փոխադարձաբար փոխարինելի դեղերի և դրանց գների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության տեղադրում

Բաժին 5 – Ազդեցություններ (Ծախսեր և Օգուտներ)

Ներկայացրեք ազդեցության տեսակը, ազդեցություն կրող հնարավոր հատուկ խմբերը և գործածված չափման միավորը, եթե այն քանակական է (դրամ կամ այլ չափման միավոր), որն առաջացել է առաջարկվող տարբերակի շնորհիվ:

Ֆինանսական ծախսեր¹ (դրամ)					
Տնտեսական ծախսեր			Ֆիսկալ/բյուջետային ծախսեր		
Տարեկան	Միջինը		Տարեկան	Միջինը	
-	-		1,237,228,340	1,237,228,340	
Ֆինանսական օգուտներ² (դրամ)					
Տնտեսական Օգուտներ			Ֆիսկալ/բյուջետային Օգուտներ		
Տարեկան	Միջինը		Տարեկան	Միջինը	
1,040,425,700	1,040,425,700		-	-	
Ազդեցություններ (միավոր)					
Մրցակցություն եւ պետական	Սոցիալական և հանրային	Առողջապահություն	Շրջակա միջավայր	Հակակոռուպցիա	Ընդհանուր գումար³

¹ Օգուտները հաշվարկված են որպես արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ տրամադրամադրվող դեղերի 1,195,311,080 ՀՀ դրամի պետական ֆինանսավորման սահմաններում պետական բյուջեի միջոցների խնայողություն, որը հանդիսանում է արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ լրացուցիչ դեղերի տրամադրման ծավալը,

² Ընդհանուր գումարը առանձին ոլորտների գնահատականների հանրագումարն է (մրցակցության և պետական օժանդակության, սոցիալական և հանրային անվտանգության, առողջապահության, շրջակա միջավայրի, հակակոռուպցիոն ոլորտներ):

օժանդակություն	անվտանգություն				
1	0	0	0	0.55	1.55

Ազդեցություններ մրցակցության եւ պետական օժանդակության վրա	Հստակեցրեք ոլորտի բացասական ազդեցությունը (Հարցաթերթիկի 5-րդ բաժնի Բ կետ)
Ներկայացրեք Ձեր կողմից առաջարկվող տարբերակի ազդեցության արդյունքը մրցակցության և պետական օժանդակության վրա	
Պահանջում կամ խրախուսում է սուբյեկտների արտադրանքի քանակի, գների, վաճառքի կամ ծախսերի մասին տեղեկատվության հրապարակում:	
Ազդեցություններ սոցիալական և հանրային անվտանգության վրա	Հստակեցրեք ոլորտի բացասական ազդեցությունը (Հարցաթերթիկի 5-րդ բաժնի Դ կետ)
Ներկայացրեք Ձեր կողմից առաջարկվող տարբերակի ազդեցության արդյունքը սոցիալական և հանրային անվտանգության վրա	
Ազդեցություն չկա	
Ազդեցություններ առողջապահության վրա	Հստակեցրեք ոլորտի բացասական ազդեցությունը (Հարցաթերթիկի 5-րդ բաժնի Ե կետ)
Ներկայացրեք Ձեր կողմից առաջարկվող տարբերակի ազդեցության արդյունքը առողջապահության վրա	
Ազդեցություն չկա	
Ազդեցություններ շրջակա միջավայրի վրա	Հստակեցրեք ոլորտի բացասական ազդեցությունը (Հարցաթերթիկի 5-րդ բաժնի Զ կետ)
Ներկայացրեք Ձեր կողմից առաջարկվող տարբերակի ազդեցության արդյունքը շրջակա միջավայրի վրա	
Ազդեցություն չկա	
Ազդեցություններ հակակոռուպցիոն ոլորտի վրա	Հստակեցրեք ոլորտի բացասական ազդեցությունը (Հարցաթերթիկի 5-րդ բաժնի Է կետ)
Ներկայացրեք Ձեր կողմից առաջարկվող տարբերակի ազդեցության արդյունքը հակակոռուպցիոն ոլորտի վրա	
Չսահմանված ժամկետներ և վերջնաժամկետներ	

Բացատրություն
Համառոտ նկարագրեք պատճառները, թե ինչու է 3-րդ տարբերակը կարգավորողի համար նախընտրելի
Առաջարկություններ
Կարգավորողը նպատակ է հետապնդել ապահովելու պետության կողմից արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ տրամադրվող դեղերի ֆիզիկական և ֆինանսական մատչելիություն, խթանելու դեղերի տեղական արտադրությունը և պահպանելու դեղերով ապահովման պետական ամենամյա նպատակային ծրագրերում սոցիալական արդարություն, ինչի իրականացումն առավելագույնս ապահովում է տարբերակ 3-ը:

ԿԱԳ-Ի ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՁԱՆՄՈՒՇ
Տարբերակ 2 (առանց գործողության տարբերակ) / Տարբերակ 1

Բաժին 4 – Կարգավորիչ/ոչ-կարգավորիչ տարբերակներ	
Հակիրճ նկարագրեք հիմնական մյուս տարբերակները, որոնք դիտարկել եք:	
Տարբերակ 2 (առանց գործողության տարբերակ)	Տարբերակը չի ենթադրում որևէ լրացուցիչ գործողություններ:
Տարբերակ 1	<ol style="list-style-type: none"> 1. Հայաստանի Հանրապետությունում իրականացնել լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ դեղերի գների պետական կարգավորում (այսուհետ՝ դեղերի գների պետական կարգավորում)՝ դեղի հենակետային գնի, դրա նկատմամբ մեծաձախ ու մանրաձախ առավելագույն հավելագնի սահմանման միջոցով: 2. Դեղերի գների պետական կարգավորումն իրականացնել դեղի համընդհանուր անվանմանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված դեղերի համար՝ ըստ դրանց դեղաձևի և դեղաչափի: 3. Դեղերի հենակետային գները, դրանց նկատմամբ մեծաձախ ու մանրաձախ առավելագույն հավելագները սահմանի Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ դեղերի գների պետական կարգավորման նպատակով ստեղծված դեղերի գների պետական կարգավորման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) եզրակացությունների հիման վրա: 4. Լիազոր մարմինի կողմից իր պաշտոնական ինտերնետային կայքում դեղերի պետական կարգավորում ունեցող

դեղերի հենակետային գների, մեծածախ և մանրածախ առավելագույն հավելագների, այդ դեղերի Հայաստանի Հանրապետությունում գրանցված բոլոր փոխադարձաբար փոխարինելի դեղերի և դրանց գների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն տեղադրում

5. Դեղերի գները կարգավորող որոշումները չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ինը հարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Բաժին 5 – Ազդեցություններ (Ծախսեր և Օգուտներ)				
Այլընտրանքային յուրաքանչյուր տարբերակի համար ներկայացրեք ազդեցության տեսակը, հնարավոր ազդեցություն կրող հատուկ խմբերը և գործածված չափման միավորը, եթե այն քանակական է (դրամ կամ այլ չափման միավոր):				
Ֆինանսական ծախսեր (դրամ)				
	Տնտեսական ծախսեր		Ֆիսկալ/բյուջետային ծախսեր	
	Տարեկան	Միջինը	Տարեկան	Միջինը
Տարբերակ 2 (առանց գործողության տարբերակ)	-	-	1,195,311,080	1,195,311,080
Տարբերակ 1	-	-	1,208,877,930	1,208,877,930
Ֆինանսական օգուտներ⁴ (դրամ)				
	Տնտեսական առավելություններ		Ֆիսկալ/բյուջետային առավելություններ	
	Տարեկան	Միջինը	Տարեկան	Միջինը
Տարբերակ 2 (առանց գործողության տարբերակ)	-	-	-	-
Տարբերակ 1	307,546,440	307,546,440	-	-
Ազդեցություններ (միավոր)				

⁴ Օգուտները հաշվարկված են որպես արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ տրամադրամադրվող դեղերի 1,195,311,080 ՀՀ դրամի պետական ֆինանսավորման սահմաններում պետական բյուջեի միջոցների խնայողություն, որը հանդիսանում է արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ լրացուցիչ դեղերի տրամադրման ծավալը,

	Մրցակցություն և պետական օժանդակություն	Սոցիալական և հանրային անվտանգություն	Առողջապահություն	Շրջակա միջավայր	Հակակոռուպցիա	Օգուտների ընդհանուր գնահատական ⁵
Տարբերակ 2 (առանց գործողության տարբերակ)	0	1.4	1.3	0	2.2	4.9
Տարբերակ 1	6	0	0	0	2.75	8.75
Ազդեցություն մրցակցության և պետական օժանդակության վրա						Հստակեցրեք ոլորտի բացասական ազդեցությունը (Հարցաթերթիկի 5-րդ բաժնի Բ կետ)
Ներկայացրեք մրցակցության և պետական օժանդակության վրա ազդեցության Ձեր թեստի արդյունքը յուրաքանչյուր տարբերակի համար						
Տարբերակ 2 (առանց գործողության տարբերակ)	Ազդեցություն չկա					
Տարբերակ 1	<ul style="list-style-type: none"> - Սահմանափակում է որևէ տեսակի տնտեսվարող սուբյեկտի՝ ապրանքի կամ ծառայության մատուցման հնարավորությունները: - Տարբերակը ունի առանձնահատուկ ազդեցություն ՓՄՁ-ների վրա (Տես ամփոփաթերթի Բաժին 5-ի Աղյուսակ 1-ի 1-ին մասի 6-րդ սահմանափակում): - Սահմանափակում է տնտեսվարող սուբյեկտների հնարավորությունները կամ ազատությունը սահմանելու իրենց արտադրանքի գինը: - Տարբերակը ունի առանձնահատուկ ազդեցություն ՓՄՁ-ների վրա (Տես ամփոփաթերթի Բաժին 5-ի Աղյուսակ 1-ի 2-րդ մասի 11-րդ սահմանափակում): - Պահանջում կամ խրախուսում է սուբյեկտների արտադրանքի քանակի, գների, վաճառքի կամ ծախսերի մասին տեղեկատվության հրապարակում: - Տարբերակը ունի առանձնահատուկ ազդեցություն ՓՄՁ-ների վրա (Տես ամփոփաթերթի Բաժին 5-ի Աղյուսակ 1-ի 3-րդ մասի 15-րդ սահմանափակում): 					

⁵ Գլխավոր գնահատականը առանձին ոլորտների գնահատականների գումարն է (մրցակցության եւ պետական օժանդակության, սոցիալական և հանրային անվտանգության, առողջապահության, շրջակա միջավայրի, հակակոռուպցիոն)

Ազդեցություն սոցիալական և հանրային անվտանգության վրա		Հստակեցրեք ոլորտի բացասական ազդեցությունը (Հարցաթերթիկի 5-րդ բաժնի Դ կետ)
Ներկայացրեք սոցիալական և հանրային անվտանգության վրա ազդեցության Ձեր թեստի արդյունքը յուրաքանչյուր տարբերակի համար		
Տարբերակ 2 (առանց գործողության տարբերակ)	<ul style="list-style-type: none"> - Բացասաբար է ազդում սոցիալական պաշտպանվածության իրավունքից օգտվելու սխեմաների վրա: - Բացասաբար կազդի հիմնական ապրանքների և ծառայություններ հասանելիության կամ մատչելիության վրա (սնունդ, առողջապահություն, կրթություն, բնակարանային ապահովվածություն, էներգետիկա, ջուր, տրանսպորտ, բանկային ծառայություններ, թվային ծառայություններ): 	
Տարբերակ 1	Ազդեցություն չկա	
Առողջապահության վրա ազդեցություն		Հստակեցրեք ոլորտի բացասական ազդեցությունը (Հարցաթերթիկի 5-րդ բաժնի Ե կետ)
Ազդեցություն ներկայացրեք առողջապահության վրա ազդեցության Ձեր թեստի արդյունքը յուրաքանչյուր տարբերակի համար		
Տարբերակ 2 (առանց գործողության տարբերակ)	<ul style="list-style-type: none"> - Սոցիալական աջակցություն և սոցիալական ցանցեր - Բժշկական ծառայություններ 	
Տարբերակ 1	Ազդեցություն չկա	
Ազդեցություն շրջակա միջավայրի վրա		Հստակեցրեք ոլորտի բացասական ազդեցությունը (Հարցաթերթիկի 5-րդ բաժնի Զ կետ)
Ներկայացրեք շրջակա միջավայրի վրա ազդեցության Ձեր թեստի արդյունքը յուրաքանչյուր տարբերակի համար		
Տարբերակ 2 (առանց գործողության տարբերակ)	Ազդեցություն չկա	
Տարբերակ 1	Ազդեցություն չկա	
Ազդեցություն հակակոռուպցիայի վրա		Հստակեցրեք

Ներկայացրեք հակակոռուպցիայի ստուգման Ձեր թեստի արդյունքը յուրաքանչյուր տարբերակի համար		ոլորտի բացասական ազդեցությունը (Հարցաթերթիկի 5-րդ բաժնի է կետ)
Տարբերակ 2 (առանց գործողության տարբերակ)	<ul style="list-style-type: none"> - Օրենսդրական կարգավորման բացեր - Չսահմանված ժամկետներ և վերջնաժամկետներ - Թափանցիկության բացակայություն - Հանրության հսկողության քիչ հնարավորություն 	
Տարբերակ 1	<ul style="list-style-type: none"> - Օրենսդրական կարգավորման բացեր - Կարգավորումների/լուծումների կայացման գործընթացի հետաձգում - Հետագա կարգավորման իրավասություն - Չսահմանված ժամկետներ և վերջնաժամկետներ - Ոչ համոզիչ և հիմնավորված 	
Բաժին 6 - Հանրային խորհրդակցության հաշվետվություն		
Խորհրդակցության ձևը (լսումներ, առցանց, այլ) և ժամկետ	Քննարկումներ, խորհրդակցություններ, հանդիպումներ, առցանց հարցումներ, հեռախոսազրույցներ, հարցումներ հարցաթերթիկների միջոցով: Տևողությունը՝ 3 շաբաթ	
Մասնակից շահառուներ և փորձագետներ	Մինչև 7 տարեկան երեխաների ծնողներ «Ալֆա Ֆարմ» ընկերության ներկայացուցիչ «Ինովա Ֆարմ» ընկերության ներկայացուցիչ «Նատալի Ֆարմ» ընկերության ներկայացուցիչ Երևանի պետական բժշկական համալսարանի դեղագործական ֆակուլտետի ուսանողներ Հայաստանի Ամերիկյան համալսարանի ուսանողներ Հանրություն՝ առցանց հարցումների և ֆորումների անցկացման միջոցով	
Հանրային արձագանքի հակիրճ նկարագրությունը/արդյունքները, ինչպես նաև դրանք հաշվի առնելու եղանակները		
Մանրամասների համար տե՛ս հավելված 6: 464 հոգուց՝ <ul style="list-style-type: none"> ▪ 312-ը ընտրել է 3-րդ տարբերակը ▪ 228-ը ընտրել է 1-ին տարբերակը ▪ 39 -ը ընտրել է 2-րդ տարբերակը 		
Բաժին 7 – Տարբերակների համադրում և ընտրություն		

Տարբերակների ամփոփում (տե՛ս նաև հավելվածներ 5,6,7)			
Հակիրճ նկարագրեք Ձեր դիտարկած տարբերակների հիմնական արդյունքները՝ նշելով դրանց տարբերությունները			
	Հիմնական օգուտներ (դրամ)	Հիմնական ծախսեր (դրամ)	Մեկնաբանություններ
Տարբերակ 1	1,040,425,700	1,237,228,340	Հիմնական ծախսերի և հիմնական օգուտների հաշվարկը բոլոր տարբերակների համար կատարվել է յուրաքանչյուր տարբերակի տնտեսական և ֆինակա/բյուջետային համապատասխան ծախսերի և օգուտների պարզ գումարման միջոցով.
Տարբերակ 2 (առանց գործողության տարբերակ)	-	1,195,311,080	
Տարբերակ 3	307,546,440	1,208,877,930	
Բաժին 8	Ծախսեր-Օգուտներ⁶ (դրամ)		Ազդեցություններ (միավոր)
	Տնտեսական	Ֆինակա/բյուջետային	
Տարբերակ 1	+1,040,425,700	-1,237,228,340	8.75
Տարբերակ 2	0	-1,195,311,080	4.9
Տարբերակ 3	+307,546,440	-1,208,877,930	1.55
Նախընտրելի տարբերակ	Մեկնաբանություն		
Տարբերակ 3.	Ելնելով հիմնական դեղերի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովման նպատակից՝ տարբերակների համադրումը ցույց է տալիս, որ ներկայիս իրավիճակում (ելակետային տարբերակ 2) արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ դեղերի տրամադրման համար հատկացվող պետական բյուջեի մջոցները՝ 1,195,311,080 ՀՀ դրամ, արդյունավետ չեն օգտագործվում: Կարգավորողի կողմից առաջարկվող տարբերակը (տարբերակ 1), լինելով ավելի նպաստավոր, առաջացնում է նաև լրացուցիչ ազդեցություններ: Ուստի փոխհատուցվող դեղերի պահանջարկի և պաշարների վերահսկման միջոցով փոխհատուցմաղ դեղերի արդյունավետ պլանավորումը և փոխհատուցվող դեղերի փոխարինողների (ջեներիկերի) առկայության դեպքում արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ միայն փոխհատուցվող դեղերի փոխարինողների տրամադրումը (տարբերակ 3) ապահովում է դեղերի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովման նպատակի առավել արդյունավետ իրականացում:		

⁶ Թվերի դիմաց «-» նշանը նշանակում է, որ ծախսերը գերազանցում են օգուտները, իսկ «+» նշանը՝ օգուտները գերազանցում են ծախսերը:

Հավաստագրում	
Ամսաթիվ	Ստորագրություն
06.05.2016թ.	Անահիտ Երիցյան Գնել Մայիլյան